

Լ.ԱՐՄԻՐ **3** ՄԱՐՏԻԿԻ
ԳՐԱԳԱՐԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ



ՀԱՅՐԵՆԻՔ

Հ Ա Յ Մ Ա Ր Տ Ի Կ Ի Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ձ 3

891.99-1

ՍՏՈՒԿՎԱՍ Է 1961 թ.

Հ-30

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

(Հայ բանասերդները հայրենիքի մասին)

26764
5595



Պ Ե Տ Տ Ր Ա Տ
Ե Ր Ե Վ Ա Ն
1943

Р о д и н а
(На армянском языке)
Аргиз, Ереван, 1943

Խ Ա Բ Ո Վ Յ Ա Ն

Այն վաթան, վաթան՝ քու հողին զուրբան,
 Քո ծխին զուրբան, քո ջրին զուրբան,
 Է՞ս փառքն ունեիր, է՞ս պատիվն առաջ,
 Որ հիմիկ ավիրվել, մնացել էս անջան:

Ե՞րբ միտք կաննի, թե էս հողերը,
 էս դաշան ու սարերն, էս սուրբ ձորերը
 Էնպես մեծություն, էնպես լավ օրեր
 Քաշել են, մնացել ան հիմիկ անտեր:

Ո՞ւր ձեր տերերը, թագալորները,
 Ձեր պահողները, ձեր իշխանները,
 Ընչի՞ մեկ թողին իրանց սրբերը
 Ու ձեռք վերցրին, թողին էս քարերը:

Ձեր գերեզմանը, այն ձեր լիս հողը,
 Որ հիմիկ չեմ տեսնում ձեր կորած թուրը,
 Կրակ է ընկնում ջանն, սոկերքը,
 Ուզում ա ձեզ հետ պարզի իբ սուքը:

Ընչի՞ ձեր վախալ աչքս բաց չարի,
Մարմինս հողին, ջանս ձեզ չտվի,
Որ հմիկ էսպես չթուչեի, չգայի,
Ձեր հողը չտեսնեի, ձեր վրա չլայի:

Հող ունինք՝ խլած, կյանք ունինք՝ մեռած
Ա՛խ, ջրի, կրակի մենք եսիր դառած,
Ո՛չ երկինքն տեսնի մեր սուգն ու լացն,
Ո՛չ երկիրն պատուի մեզ տանի ցած:

Ի՞նչ կըլնի՛ մեկ էլ գլուխ բարձրացնեք,
Ձեր մարդիկը տեսնեք, նրանց ցավը քաշեք,
Ձեր արնախառն աշխարհն ազատեք,
Յա մեզ էլ ձեզ հետ հողը տանիք, պահեք:

Աչքս բաց արի խարարա տեսա.
Ախ, ո՞վ գիտեր, թե մեր ազգի վրա
Սարեր են էլել, հիմիկ բրիշակ.
Մեզ տակով չարել, որ էլ խեղճ չմնանք:

Ա՛խ մեր սիրտն էսպես ընչի՞ հովացել,
Արինը ցամաքել, մեր կուռը թուլացել.
Երաբ կտեսնի՞մ անխ ես մեկ օր էլ,
Մեր սուրբ երկիրը թշնամուց ազատիլ:

էն ի՞նչ շունչ կըլի որ էս նոր հողին
Փշի, վերկացնի քնից մեր աղգին.
էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին
էլ եղ սիրտ տա ու կանգնեցնի կրկին:

Ա՛խ ես էն ձեռքին կյանքս դուրբան կանեմ,
էն կոխած հողին երեսս կքսեմ,
Ապրիմ իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնիմ հողիցն էլ միշտ նրան կօրհնեմ:

Կանգնել ես էդպես գլուխդ ամպին խփած
Ա՛յ խեղճ հալևոր, երեսդ փակած.
Ի՞նչ կըլեր՝ Մասիս ան դեռ աչքդ բաց,
Սրի չտայիր քո որդիքն էրված:

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ

Ազատն աստված այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողան յուր շինվածքին
Կենդանութ յուն պարգևել,

Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անդոր թևերով
Ազատությունն գրկեցի:

Մինչ զիշերը անհանգիստ
Օրորոցում կապկապած
Կալիս էի անդադար
Մորս քունը խանդարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի
Ազատությունը սիրել:

Թոթով լեզվիս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խոտքն, որ ասացի,
Չէր հայր, կամ մայր, կամ այլինչ
Ազատություն, դուրս թռավ
Իմ մանկական բերանից:
«Ազատություն», ինձ կրկնեց
Ճակատադիրը վերևից.

«Աղատության դու գինվոր
կամիս գրվել այս օրից:
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Բեզ շատ փորձանք կըսպասե,
Աղատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»:

— Աղատություն, — գոչեցի, —
Թող սրտս իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին.
Ես մինչ ի մահ, կախազան,
Մինչև անարգ մահու սյուն
Պիտի գոռամ, սիրտ կրկնեմ
Անդադար աղատություն:

ՄԿ. ՊԵՇԻԿՅԱՆ

ԳԱՐՈՒՆ

Ո՛հ, ինչ անուշ և ինչպես դով
Առավոտուց փրչես հովիկ,
Ծաղկանց վրա գուրգուրալով

Եվ մազերուն կուսին փափլիկ,
Բայց չես հովիկ իմ հայրենյաց,
Գնան անցիր սրտես ի բաց:

Ոհ ի՞նչ աղու և սրտապին
Ծառոց մեջեն երգես թռչնիկ,
Սիրո ժամերն ի հանտառին
Ըղմայլեցան ի քո ձայնիկ,
Բայց չես թռչնիկ իմ հայրենյաց,
Գնան թըռիր սրտես ի բաց:

Ո՛հ, ի՞նչ մբմունջ հանես վըտակ
Ականակիտ ու հանդարտիկ,
Քու հայելվույդ մեջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ,
Բայց, չես վըտակ իմ հայրենյաց,
Գընան, հոսե սրտես ի բաց:

Թեպես թռչնիկ և հովիւ Հայոց
Ավերակաց թռչին վերա,
Թեպես պղտոր վըտակն Հայոց
Նոճիներու մեջ կը սողա,
Նոքա հառնչք են հայրենյաց,
Նոքա չերթան սրտես ի բաց:

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ

Ոչ փող զարկինք, ոչ արձագանք լեռնասույզ
 Սարե ի սար չարաշըշուկ տարին լուր,
 Ու չերգեցինք ողբոց երգեր սրտահույզ,
 Երբ պատանվույն բացինք մըռայլ փոփին դուռ:

Գիշերական մունջ ըստվերներ շուրջ կային
 Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք,
 Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին
 Սուգ էր պատեկ ըզգաշտ, բըլուր և երկինք:

Պետք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ,
 Որով գոցվեր ազատորդի քաջորդին,
 Նա ետ մարտին կարծես հոգնած կուհանգչեր
 Ու վերարկուն կարմիր բալ էր յուր անձին:

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց
 Մեր քաջ տերտերն, զինվոր հայոց ու աստուծո,
 Գովեց ըզմահն և քաջությունն յուր օրհնեց
 Թույլ չի տըվալ հառաչ մ' ու ճիչ հանելու:

Բայց երբ գըլուխն ի բարձ դըրինք հողաշեն
 Տեսանք ըզգեղ ճակատին ու վերքըն պայծառ,
 Ո՛վ պատանյակ, ըսինք ամենքս մեկ բերնեն,
 Վասն հայրենյաց մեռար, դու շատ ապրեցար:

Գընան զըռուցե հայկազարմից մեծ ողվոց
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ հայեր,
Որոնք ի բույր պատերազմաց թեպեա խոց
Մեջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր...

Մեյ մ'ալ քամի հանկարծ փրչեց ցրտաշունչ
Լուսնին շողերն եկավ. գոցեց մըթին ամպ
Ու մեր սարերն զերթ ուրվականք անմըտունչ
Սև գլուխնին տնկած դիտեն ապշությամբ:

Այն ժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք յուր վրան.
Խաչ մը զըրնք, ինչպես յուր մոր պատվեր ետ.
Ո՛չ այլ շքեղ արձանագիր, ո՛չ տապան,
Զինքըն մինակ թողուցինք յուր փառքին հետ:

Ռ. ՊՍԿԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի էլ լռենք, եղբարք, հիմի էլ
Երբ մեր թըշնամին իր սուրն է զըրել,
Իր օրհասական սուրը մեր կըրծքին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,

Ասացեք, եզրարք հայեր, ի՞նչ անենք,
Հիմի էլ լրուենք:

Հիմի էլ լրուենք, երբ մեր թըշնամին,
Դավով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարքից Հայկա անունը,
Հիմքից կործանեց Թորգոմա տունը,
Խըլեց մեզանից թագ, և խոսք, և զենք,
Հիմի էլ լրուենք:

Հիմի էլ լրուենք, երբ մեր թըշնամին
Խըլեց մեր սուրբ—սլաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըլեց,
Վայ մեզ, շղթայով կապած գերի ենք,
Հիմի էլ լրուենք:

Հիմի էլ լրուենք, երբ մեր թըշնամին
Սոսկալի զենքը բըռնած մեր գըլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղեխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գըլուխը լալու Եփրատ ճեր պըտուենք,
Հիմի էլ լրուենք:

Հիմի էլ լրուենք, երբ մեր թըշնամին
Լիրբ գոռոզությամբ լցրած իր հոգին,

Արդարության ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդոսւթաւ, հալածյալ, եղբարք, մեր դիմենք,
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իր լիրբ, նըղոված ձեռքը կարկանոց,
Ազգությանս վերջին կապը պատառոց,
Հայի կորուստը մոտ է, ինչ անենք,
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք՝ մարգիկ կոնչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խոսեն,
Չեն ասիլ որ հայք արժանի էին
Այդ ստըրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնյաց գործերը գիտենք,
Մինչև երբ լըռենք:

Թո՛ղ լըռե մուռնջը, անդամալուծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հողի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք
Ու այնպես լըռենք:

(Հասկած չկանցի վեցից)

Գեղեցիկ աշխարհ, դու հայոց աշխարհ,
 Լըցված, ողողած, դառն արտասուքով.
 Որքան խեղճ ես դու, և որքան թշվառ,
 Արյունաշաղախ տեսարաններով:

Ողջույն եմ բերել քեզ ես հյուսիսից,
 Գուցե, ոչ առանց դառն արտասուքի.
 Թույլ տուր, ով մայր իմ, հարազատ հողից
 Օձանեմ մարմինս—հարուժյճեն առնի:

Քո մեջ ծաղկում է լիության սրտակ,
 Բոլորն սարգևել է քեզ բնություն.
 Բայց, ով քաղցրաշունչ Հայաստան հողյակ,
 Ինչո՞ւ հյուսիսի չունիս կրթություն:

Ինչո՞ւ քո որդիք, այնքան կամակոր,
 Գրկել են խավար, որ կարոտ ունի:
 Ինչո՞ւ չեն զարթնում քնից դարևոր,
 Որ կենդանության նշույլը ծագի:

Ես քանի անգամ երկնք ից հարցրի,
 Քանի աղոթքով դեպ երկիր դարձա.—

Ասացէք դուք ինձ, ո՞ր բռնավորի
Շարժեցալ ձեռը անսլարտիդ վերս:

Եվ չունի՞ս արդէոք ոչինչ դորություն,
Հիվանդ ես, ասա, կորսեա՞ս օրհասի.
Եվ ո՞վ խանդարեց քո վառ մանկություն,
Լուսին Մահմետի, թե բարբը Հայի:

Եվ մի՞թե ոչ ոք քո զավակներից
Փայլատակելու չէ՞ սուսեր ձեռքին,
Փոթորիկ, հրդեն վերավոր կուրծքից
Անվախ թափելով ոստիս գնդին:

Պատկառելի կին, մայր մեր նետահար,
Արիության մեջ անսլատիվ եղած.
Աչքերում արյուն, մազերն անհարզար...
Ասլտակահի՞ժ է, անբո՞ւյժ խոցոտված...

Մի վեր կաց, կանգնիր աշխարհ Հայաստան,
Մի թնփ տուր ուժով, թնդ ճեղքվին կասկանք.
Ահա՛ քեզ աշյուն իմ նվիրական,
Թնդ ցողեն դաշտերդ փրկության հոսանք:

ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
 Դու գարնան սիրուն թռչնակ,
 Դեպի սէր ինձ առն,
 Թըստում ես այդպէս արագ.

Ա՛խ, թըսիր, ծիծեռնակ,
 Ծընած տեղս Աշտարակ,
 Անդ շինիր քո բունը
 Հայրենի կառուրի տակ.

Անդ հետու ալկոբ
 Հայր ունիմ սըղավոր,
 Որ միակ յուր որդուն
 Սպասում է օչն օր.

Երբ տեսնես դու նրան՝
 Ինձնից շատ բարե արն,
 Ասա, թող նստի լա
 Յուր անբաղդ որդու վըրա:

Դու պատմե թե ինչպէս
 Աստ անտեր ու խեղճ եմ ես,

Միշտ լալով, ողբալով
Կյանքս մաշվել՝ եղել կես:

Ասիւր որ՝ չի բացված
Թառամեցա միացած
Ես ծաղիկ գեղեցիկ
Հայրենի հողից զրկված:

Դեհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թըւիր արագ—
Դեպի հայոց երկիրը
Ծընած տեղս— Աշտարակ:

Պ. ԴՈՒՐՅԱՆ

ԻՄ ՅԱՎՐ

Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գտնել աղբերքն հարմար,
Ցամքիլ ծաղիկ հասակի մեջ.
Ո՛հ, չէ՛ այնչափ ցալ ինձ համար:

Ջերմ համբույրով մը դեռ չայրած
Սա ցուրտ ճակատըս դալկահար՝

Հանգչեցունել հողե բարձին,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ փունջ մը
Ժպտե՛ գեղե՛ հարե շաղյալ՝
Գրկել սա ցուրտ հողակույար,
Ո՛հ, չէ՛, այնչափ ցավ ինձ համար:

Քաղցր երազող մ՛հղի մրափ մը
Չաննորրած գլուխս մըրկահար՝
Ննջել հողե վերմակին տակ,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Հագնիլ հյուղեն մուր—անունը,
Ծըծե՛կ նորա մըրուր—օղն հար,
Միշտ ցավիլը միանգամայն,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Զօգնած անոր՝ մեռնիլ աննշան,
Ո՛հ, այս է սոսկ ցավ ինձ համար:



Տ Ղ Մ Ո Ւ Տ

Մըտալ արև, Ալարայրին մութ պատկոց,
 Սև ամպերով երկնից զեմքը քողարկվեց.
 Բնությունը մի քուն մտած հեշտասեր
 Վայելում է անուշության վառ ժամեր:

Չէ նվազում քաղցըր սրինգն հովվական,
 Թռչունների քնքուշ տաղեր լուցանի.
 Ծաղիկները նիրհած փափուկ մարդերում
 Երբեմն մեղմիկ հովի հեռ կն համբուրվում:

Բայց այդ քունը մոտ չէ դալիս հեշտագին
 Ծեր Տղմուտի արյունահոխ աչքերին
 Սյն սև օրից, երբ որ կուրծքը կուսական
 Ոռոզվեցավ արյունավը հայության:

Անցան դարեր, դեռ Տղմուտը հեծելով
 Գիշերները խանդարում է անվրդով
 Ալարայրի անուշ քունը, և չունի
 Մինչև այսօր նա ողբակից յուր վշտի:

Եվ ձերունին հառաչում է սգավոր.
 Արյուն դարձած կոհակները ալևոր

Գրնում, գալիս, զարնվում են ավերին,
Անցած փառքը հիշեցնում են հայերին:

«Ձեր նախնյացը էլ չեք նման դուք, հայեր,
Ձունիք այլ ևս հայրենասեր այն ոգին.
Նոքա մեռան, և կուրծքները անվեհեր
Արյամբ բուսած անմահ վարդեր պսակեցին:

Նոքա գըլուխ չըտվեցին բռնության,
Զըծախեցին նոքա խիղճը և ամոթ,
Ազատության երկրպագու կանգնեցան,
Հալիստալով փառքի լուսոյն անաղտո:

Եվ անթառամ զարդարվեցան պսակով,
Անմահացավ այն յվեհ հոգին արության.
Եվ հայրենյաց կյանք տվեցին արյունով
Ահեղ մարտի զաշտում հայ մարդ, հայ գուսան:

Դուք ի՞նչ արիք, դուք փառավոր նախորդաց,
Ստրուկ ծընած, անխառք սընած զավակներ.
Հայ սար, հայ դեռ, հայ զաշտորայք շունչ տուած
Պիտ ամոթով այրեն ձեր սև երեսներ:

Ազատության սուրբ պատկերը կործանած,
Դուք ծաղրում եք ազատասեր ըզգացմունք.

Նոր Հաղկերտի անարգ բազին եք կանգնած
Եվ խայտառակ կատարում եք պաշտամունք:

Ո՛հ, թե ելներ կորած մոռցված դամբանից
Վարդանների առյուծական այն հողին,
Եվ երկաթի խարազանը թռնալից
Տար ձեր ժպիրհ, ամոթապարտ ճակատին,

Եվ արցունքով համըռլբեիք սուրբ շիրիմ,
Ուխտ կապեիք նորից խաչով ու սըրով
Կանգընեցնել նոր Արտաշատ, Խոխոցիմ,
Վերջ տալ անարգ այս վիճակին արյունոտ...

Եվ Տղմուտը հառաչում է սգավոր.
Արյուն դարձած կոհակները ալևոր
Գընում, գալիս, զարնվում են ավերին,
Անցած փառքը հիշեցնում են հայերին:

Անցան դարեր. դեռ ծերունին հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Ավարայրի անուշ քունը, բայց չունի
Նա ույժ քունը խանգարելու հայերի...

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ

Որդեկորույս խղճով կ'մայրեր,
 Մի լաք աշխատես դառնագին,
 Որ սիրասուն ձեր դավակներ
 Կյանքը դոհած հեզ ազգին,
 Մատանդ օրեր, ծաղիկ հասակ,
 Ծընող, քույրեր մոռացան,
 Եվ սուրբ գործի քաջ նահատակ՝
 Ռազմի դաշտում փուլեցան...

Ո՛չ հոգերուխ սուրբ աղոթքը
 Օրհնեց անթաղ դիակներ,
 Ո՛չ մայրական դողդոջ ձեռքը
 Փակեց անկյանք, սառն աչեր.
 Միայն երկինք—խավար երկինք
 Արյամբ ներկված աշխարհի
 Տեսավ բարձրից, օրհնեց լըռիկ
 Վերջին շունչը քաջերի...

Բայց դուք մի լաք, ո՛վ հայ մայրեր,
 Ձեր սնույած քաջ որդիք
 Ձեին սիրում արտասուքներ

Երբ բազմաաանջ հայրենիք
Ազատութեան ջերմ փափագով
Ազգից խնդրեց ողջակից,
Նսքա անլաց, վառված հոգով
Վերջին համբույր տվին ձեզ...

Վերջին համբույր... Եվ սըլացան
Դեպի լեռներ արնաներկ.
Մատաղ ձեռքին—սուր, հրացան,
Վարդ շրթունքին—ազատ երգ...

Հ Ե Ր Ո Ս Ի Ն

Հերոս, դու անցար կյանքի ուղին,
Այժմ քո փառքը կնայրի աշխարհում.
Կնայրի քո վսեմ, անձնուրաց ողին,
Սուրբ հայրենիքիդ հզոր երգերում.
Կապրի քո գործը—գործ հերոսական,
Որ ազատութեան պարգևեց նըրան:
Քանի որ ազգը շնչում է ազատ,
Կենդանի կը մնաս դու նրա կրծքում,
Դու ընկած... բայց քո արյունն անարատ,
Կը հոսե դարձյալ մեր երակներում,

Եվ քո գործերի փառահեղ դափնին,
Միշտ ույժ ու եռանդ կը տա քո ազգին:

Կովի փոթորկում անունդ հիշելով,
Սարսափ կը ձգենք թշնամու սրտում,
Հերոսիդ մահը կերպեն մեծ փառքով,
Մեր մատաղ կույսերն իրանց երգերում,
Եվ դու չես լսիլ երբեք լացի ձայն,—
Կացը կանարգեր քո սուրբ զերեղման:

ՀՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՒԻՒՍ ՀԵՏ

Վազուց թեև իմ հայացքը Անհայտին է ու
հեռվում,
Ու իմ սիրաը իմ մըտքի հետ անհուններն է
թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ
դեպի քեզ՝
Մըղկըտում է սիրաըս անվերջ քո թառանջից
աղեկեղ,
Ու դազթախան դավակներիդ լուռ շարքերից
ուժասպառ,

Ե՛վ գյուղերից, և՛ շիններից՝ տըխո՛ւր, դատարկ
ու խալ՛ար,

Ձարկված հայրենիք,

Ձըրկված հայրենիք:

Խըռնըվում են մըտքիս հանդեպ բանակաները
անհամար,

Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,

Ու ջարդարար ոհմակաները աղաղակով վայրենի,

Ավարներով, ավերներով, խընջույքներով

արյունի,

Որ դարձըրին քեզ մըշտական, սև ու սուգի մի

հովիտ,

Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով

անժըպիտ,

Ողբի՛ հայրենիք,

Ողբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու

կենդանի,

կանգնած խոհո՛ւն, խորհըրդավոր ճամփին նորի

ու հնի.

Հառաչանքով սըրաի խորքից խոսք ես խոսում

աստծու հետ,

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամբին խավար, մեր ճամբին զիշեր,
 Ու մենք անհատնում
 էն անլույս մըթնում
 Երկնը դարերով գընում ենք դեպ լիբ
 Հայոց լեռներում,
 Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
 Մեր գանձերը ծով,
 Ինչ որ դարերով
 Երկնել է, ծընել մեր խորունկ հողին
 Հայոց լեռներում,
 Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ լերկ անասլատի
 Օրդաները սև
 Իրարու ետև
 Եկան զարկեցին մեր քարվանն աղնիլ
 Հայոց լեռներում,
 Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը շիտթ, սոսկահար,
 Թալանված, ջարդված

Ու հատված հատված

Տանում է իրեն վերքերն անհամար

Հայոց լեռներում,

Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ

Հետև աստղերին,

Երկընքի ծերին,

Թե երբ կըրացվի պայծառ առավոտ

Հայոց լեռներում,

Կանանչ լեռներում:



ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

* * *

Է՛յ, ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,

Մարերըդ կորած երկնի մովի մեջ,

Ջրերըդ աննշ, հովերըդ աննշ,

Մենակ բալեքըդ արուն-ծովի մեջ:

Քու հողին մեռնեմ, անդին հայրենիք,

Ա՛խ, քիչ է, թե ուր մի կյանքով մեռնեմ,

Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ:

Ու հազար կյանքով քու դարդին մեռնեմ,
Բալեքիդ մատաղ, մատաղ քու սիրուն.
Մենակ մի կյանքը թող ինձի պահեմ,
Էն էլ քու փառքի գովքը երգելու.

Որ արտուտի պես վեր ու վեր ճախրեմ
Նոր օրվա ծեղիդ, աղիդ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բարձր ու զի՛լ գովեմ
Կանաչ արևըդ, ազատ հայրենիք...

* * *

Բոցիկու սարին սև ամպն է չոքել.
Հոփն է հեծեծում Բասենա դաշտում.—
Ոսկի երգերըդ, իմ աղիդ ընկեր,
Էն հոփն է երգում Բասենա դաշտում:

Ա՛յ, սիրո՛ւն արտուտ լալազար գարնան,
Արազի դաշտից մինչ Սլաթ ու Մո՛ւշ
Դուն թըռչում էիր սիրտըդ վառ-վառման
Գովքն ազատության երգելով անո՛ւշ:

Քաջ ընկերներով կըռիվ սըլացար
Ազատ երգերով Արազի դաշտում.

Նամարդ թշնամուն զարկիր, զարկվեցար
Ընկերներիդ հետ Բասենա դաշտում:

Ու ժողովուրդը կարոտ քու սիրուն
Բասենա դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Երգում են անվերջ երգերը սիրուն,
Ու չեն մոռանում երգերը անուշ...

Ա՛խ, սուրբ վերքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անհւշ քնեցիր.
Թո՛ղ ծանր չթվա այն հողը վլրեդ,
Որն այնպես հըղոր, անհուն սիրեցիր...

Բոցիկու սարին սև ամպն է չոքել,
Հոփս է հեծեծում Բասենա դաշտում.
Անհւշ երգերը, իմ ազիզ ընկեր,—
էն հոփս է երգում Բասենա դաշտում...

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

ԵՂԵԳՆՅԱ ԳՐԶՈՎ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր,
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք.

Սոսյաց անտառեն էի զայն կարեր...
Քեզի ընծան, հին հայրենիք—
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող՝ լույս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.
— Ձեզի ընծան, հայ պանդուխտներ.
Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծրղոտ...
— Ձեզի ընծան, հեք պանդուխտներ—
Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող՝ նղբ ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
— Ձեզի ընծան, սուրբ զոհեր—
Ան ելած էր մոխրի մեջ իբրև կնյուն...
— Ձեզի ընծան, կրակի զոհեր—
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող՝ սիրտս ելաներ:

Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.
— Քեզի ընծան, հայր ալեհեր—
Ցամքած աղբյուրեն մեր զայն հողեցի...
— Քեզի ընծա, մայր կարեր—
Եղեգնյա գրչով օճախս երգեցի.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելաներ:

ԵՍ ԵՐԳԵԼՈՎ, ԿՈՒՋԵՄ ՄԵՌՆԵԼ

Ս.

Սպասում էր և հույսի քաղցրութեանը հեռ,
 մինակ էի այդ իրիկուն
 Եվ փրկութեան ու տառապանքի նժարովը՝
 հայրենիքին ըստարը կը կշռեի...
 Երբ՝ հեռակա տանս դուռը, գիշերվան սարսափին
 մեջեն, ուժգնապես քաղխեցին
 Եվ ժպտուն՝ ընկեր մը ներս մտավ, շքեղորեն
 գեղեցիկ, եղբայրագեմ և ահավոր...

Բ

Երխասարդ էր: Աշվըներուն կայծը երկնքի
 աստղերեն էր որ կձորեր,
 Եվ հասակին ձեռքը մարմարներու դորութեան-
 ներեն էր կերտված...
 Մտածումը մարդկային արդարութեան էջերին
 հատակորեն ջահավասյալ...
 Ճակատին վրա իրենց ցավի և ըստութեան
 ծաղկներն ունեին:

Մտերմաբար քովքովի, հայրենիքին տառապան-
քեն կը խոսեինք,
Իր ծանրախոհ դլուխը սգավոր կիսաստվածի մը
արենոտ սրտին կնմաներ...
Նայվածքները նայվածքներու մեջ, նույն
ճակատազրին խորհրդանիշը փնտռեցին...
Եվ մեր տրտում ժպիտները հողիե հողի մեղմորեն
ճառադայթվեցան:

Դ

Ժամերով լոին էր: Լոին էի: Հիշատակի հեծե-
ծանքներ մեր աչքերը թրջեցին...
Եվ լամբարիս կապույտ լույսը, սեղանիս վրա,
այլ ևս արյուններու նման վար կը թորար...
Տժգունեցա ես՝ ինչպես երազ մը որ առավոտեն
երևում են կանհետի...
Բայց ինք՝ հերոսատիպ և հպարտ, ձեռքս ձեռքին
մեջ՝ ոտքի՝ ինձի ըսավ...

Ե

— Այս իրիկուն՝ հավատքի և հրաժեշտի իրիկունս
է, ընկեր,

Երիվարս թամբած եմ արդեն՝ և կյանքի ու
կովի տենդեն՝ դուռիդ առջևը կը վրնջե...
Եվ տես հասակես վար անբիծ սուրս մերկ է,
մերկուլթյամբը գերմարդկային վճիռներուն:
Ճակատդ շրթունքիս մոտեցնւր... հավատքի և
հրաժեշտի իրիկունս է, ընկեր:

Զ

«Եվ դուն սա մաքրափայլ թերթերուդ վրան,
ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծ է,
Ապագա սերունդներուն և մեր անցյալին
տխրությունն ի նվեր.
Ես որք մըն եմ և ըմբոստ մը, միսս բարյավ,
կորուսյալներս փնտռելու կերթամ...
Քու երգերեդ երգ մը տնւր ինձ, երգ մը, ես
երգելով կուզեմ մեռնիլ...»:

Շ. ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Բ Լ Ք Ո Ի Լ Ի Ն

Արի, բլրուլ, մեկ տեղ նստենք,
Չեն ձենի տանք ու երգենք.

Էս օրվանից դառնանք աղբեր,
Իբար խառնենք մեր ցավեր:

Անցնիլ դարուն, աշուն կուգա,
Շատ հեռու չէ և ձմեռ,
Լաց, աղբեր ջան, էլ վարդ չկա,
Թ՛մւիլը մնաց կխամեն:

Երգենք, աղբեր, ցնիլը երգենք՝
Դու քո մեռած ալ վարդի՛,
Երգենք, աղբեր, ցնիլը երգենք—
Ես՝ իմ ավեր վաթանի...

Անցավ դարուն, արնոտ դարուն.
Մոտ է աշուն ցուրտ ձմեռ,
Ա՛խ, աղբերս մնաց անտուն,
Քույրս քաղցից կխամեն...

Արի, բլրուլ ցալը երգենք
Վարդի ավեր վաթանի,
Արի, աղբեր իբար խառնենք
Մոմուտ ցալը մեր սրտի...



Ինչպէս չսիրեմ, երկիր իմ կիզված,
 Պարզված վերըստին սուրբերին սուրտայր.
 Ինչպէս չը սիրեմ — հեղությամբ լցված
 Դու, յոթապատիկ խոցված Տիրամայր...

Որքան որ ելան՝ արյունիդ ազահ,
 Դու կամավոր զոհ — բոլորը տվիր.
 Դու հավիտ եղար անարատ վկա —
 Չարերի կոխան, խաչված իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,
 Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
 Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
 Դու արքայաբար՝ վեհ/ու անհպարտ:

Ժամ է, ել նորից, իմ ծիրանավառ,
 Զրահավորվիր խանդով խնդազին,
 Վառիր երկունքի գիշերում խավար
 Հրով մկրտված Նայիրյան հոգին...

ԱՐԱՐԱՏԻՆ

Երկնասլաց ու թեթև,
 Նրբակապույտ ծածկած մեզ,
 Դու, հրեշտակ լուսաթև՝
 Նյութեղին չես դու Երբեք:
 Հայոց արնոտ աշխարհի
 Հոգին ես դու անարատ,
 Հուրը հար թող հրահրի
 Սեզ ճակատիդ, Արարատ:
 Եվ ավերվող մեր սրտում
 Եռա անմար ու առատ,
 Դու, պահապան մշտարթուն,
 Լուսակատար Արարատ...

Չեմ տեսել քեզ, բայց որպես
 Անուշ ցնորք իմ հոգում
 Պայծառ ես դուն հրակեզ,
 Հրապսակ ու կանգուն—
 Արգար դրոշ հայության,
 Սիրո սեզան հրառատ.
 Դու, իմ երկրի հարության
 Անխար վկա, Արարատ.
 Որքան Ֆեանք մենք նկուն,

Որքան խավարն իջնի խոր,
Ծիրանավոր մեր հոգուն
Դո՛ւ, պահապան զորավոր...
Որպես երազ լուսեղեն
Զյունապայծառ ու շողուն՝
Դո՛ւ անխորտակ ապավեն
Հրաճարակ մեր հոգուն.
Կանգնիր, անկյալ ժողովուրդ,
Եվ հավատան, և տոկան.
Կա քո վշտում վեհ խորհուրդ
Եվ խաչվածին մահ չկա.
Պարզվիր—պայծառ դեպի վեր,
Ցույն հրով անարատ,
Երկրիս մոխիր ու ավեր,
Դո՛ւ, անմահ սիրտ, Արարնատ...

Յ Ա Ն Կ

- 1.	Խ. Աբովյան—Ա՛խ վաթան, վաթան	3
2.	Սիփ. Նալբանդյան—Երգ աղատության	5
3.	Պե՛ւհիկաբեյան—Գարուն	7
	» Թագունն քաջորդվուն	9
4.	Պասկանյան—Վարդան Մամիկոնյանի երգը	10
5.	Շահագիգ—Հատված Լևոնի վշտից	13
6.	Դողոխյան—Ծիծեռնակ	15
7.	Դուրյան—Իմ ցավը	16
8.	Հովհաննիսյան—Տղմուտ	18
9.	Մասուրյան—Հայ մայրերին	21
	» Հերոսին	22
10.	Թումանյան—Հայրենիքիս հետ	23
	» Հայոց լեռներում	26
11.	Իսահակյան—Է՛յ, ջան հայրենիք	27
	» Բոցիկու սարին	28
12.	Վարուժան—Եղեգնյա գրչով	29
13.	Սիամանթո—Ես երգով կուզեմ մեռնել	31
14.	Կուրդիկյան—Բլբուլին	33
15.	Տերյան—Ինչպես չսիրեմ	34
	» Արարատին	35

Պատ. խմբագիր Ա. Ղազարյան

ՎՋ 04370. Պատվեր 746. Տիրած 10000. Տպագրական 1,4 մ
Ստորագրված է տպագրության 18/XI-43 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան 1943 թ.

Հ Ա Յ Մ Ա Ր Տ Ի Կ Ի Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ն Ե 3

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

(Հա) բանաստեղծները հայրենիքի մասին)

Պ Ե Տ Ն Ր Ա Տ
Ե Ր Ե Վ Ա Ն
1943

Р о д и н а
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1943



Ինչպէս չսիրեմ, երկիր իմ կիզված,
Պարզված վերըստին սուրբերին սուրսայր.
Ինչպէս չը սիրեմ—հեզությամբ լցված
Դու, յոթապատիկ խոցված Տիրամայր...

Որքան որ ելան՝ արյունիդ ազան,
Դու կամավոր զոհ—բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վկա—
Չարերի կոխան, խաչված իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես առատ խուռնի,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար՝ վեհ ու անհպարտ:

Ժամ է, եւ նորից, իմ ծիրանավառ,
Զրահավորվիր խանդով խնդագին,
Վառիր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված Նայիրյան հոգին...

ԱՐԱՐԱՏԻՆ

Երկնասլաց ու թեթև,
 Նրբակապույտ ծածկած մեզ,
 Դու, հրեշտակ լուսաթև՝
 Նյութեղեն չես դու երբեք:
 Հայոց արնոտ աշխարհի
 Հոգին ես դու անարատ,
 Հուրը հար թող հրահրի
 Սեզ ճակատիդ, Արարատ:
 Եվ ավերվող մեր սրտում
 Եռա անմար ու առատ,
 Դու, պահապան մշտարթուն,
 Լուսակատար Արարատ...

Չեմ տեսել քեզ, բայց որպես
 Անուշ ցնորք իմ հոգում
 Պայծառ ես դուն հրակեղ,
 Հրապսակ ու կանգուն—
 Արդար զբոշ հայության,
 Սիրո սեղան հրառատ.
 Դու, իմ երկրի հարուստյան
 Անխաբ վկա, Արարատ.
 Որքան Քանք մենք նկուն,

Որքան խավարն իջնի խոր,
Ծիրանավոր մեր հողուն
Դնւ, օրհասպան զորավոր...
Որպես երազ լուսեղեն
Ձյունապայծառ ու շողուն՝
Դնւ անխորտակ ապավեն
Հրաճարակ մեր հողուն.
Կանգնիր, անկյալ ժողովուրդ,
Եվ հավատ՛, և տոկ՛.
Կա քո վշտում վեն խորհուրդ
Եվ խաչվածին մահ չկա.
Պարզվիր—օրայծառ դեպի վեր,
Յոլն հրով անարատ,
Երկրիս մոխիր ու ավեր,
Դնւ, անմահ օիրտ, Արարնտ...

Յ Ա Ն Կ

1.	Խ. Աբովյան—Ա՛խ վաթան, վաթան	3
2.	Միխ. Նալբանդյան—Երդ ազատութեան	5
3.	Պեւիկբաբայան—Գարուն	7
	» Թագունն քաջորդվուն	9
4.	Պատկանյան—Վարդան Մամիկոնյանի երգը	10
5.	Շահագիլ—Հատված Լեոնի վշտից	12
6.	Դոդոխյան—Ծիծեռնակ	15
7.	Դուրյան—Իմ ցավը	16
8.	Հովհաննիսյան—Տղմուտ	18
9.	Մասուրյան—Հայ մայրերին	21
	» Հերոսին	22
10.	Թումանյան—Հայրենիքիս հեռ	23
	» Հայոց լեռներում	26
11.	Իսահակյան—Է՛յ, ջան հայրենիք	27
	» Բոցիկու սարին	28
12.	Վարուժան—Եղեգնյա գրչով	29
13.	Սիամանրո—Ես երգով կուզեմ մեռնել	31
14.	Կուրդիկյան—Բլբուլին	32
15.	Տերյան—Ինչպես չսիրեմ	34
	» Արարատին	35



Պատ. խմբագիր Ա. Լազարյան

ՎՊ 04370. Պատվեր 746. Տիրած 10000. Տպագրական 1,1 մ
Ստորագրված է տպագրութեան 18/XI-43 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան 1943 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040994

ገጽ 1 ለ

A $\frac{1}{5595}$